Տ. ԴԱՎԻԹ ԱԲԵՂԱ ՔԱՐԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(15 փետրվարի 2009 թ.)

«Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա – խմի: Ով Ինձ հավատում է, նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն»:

(Հովհ. Է 37)

Սիրելի հավատացյալ քույրեր ու եղբայրներ, օրվա խորհրդածության համար վերցված այս խոսքերը մեր հավատքի գեղեցիկ ու խտացած պատկերներից մեկն են: Հիսուս Քրիստոս Ինքը Հայր Աստծո մարդացած պատկերը լինելով՝ մեզ հետ խոսում է մեր կյանքից առնված բնորոշ պատկերներով, որպեսզի մեր մտքի տկարության պատճառով անհաղորդ չմնանք Նրա բերած նոր կյանքին: Եվ ահա Տերն այսօր ներկայանում է որպես կենաց ջուր: Մենք բոլորս էլ առանց երկմտելու կարող ենք հաստատել, որ առանց ջրի պիտի դժվարությամբ ապրեինք նույնիսկ մեկ օր, ուրեմն բոլորս էլ հասկանում ենք, թե այսպես կամենում է մեզ ասել, որ առանց Աստծո մարդ չի կարող ապրել նույնիսկ մեկ օր: Սակայն փորձենք խորհրդածել այս խոսքերի մասին: Հպանցիկ մի ակնարկով կարող ենք տեսնել, որ ջուրը հիշատակվում է Ս. Գրքի առաջին իսկ տողերում. «Եւ Հոգի Աստուծոյ շրջէր ի վերա ջուրց» (Եվ Աստծո հոգին շրջում էր ջրերի վրա) (Ծնող. Ա 2): Չկամենալով մանրամասնորեն ներկայացնել ջրի մասին Աստվածաշունչ մատյանում եղած բոլոր հիշատակումներն ու դրվագները՝ պարզապես ասենք, որ ջուրը կենդանական ու բուսական աշխարհի բաղադրիչներից մեծագույնն ու կարևորագույնն է, սակայն որպեսզի ավելի լավ հասկանանք մեր Տիրոջ վերը հիշված խոսքերը, պիտի նայենք, թե ինչ կարևորություն և նշանակություն ուներ ջուրը հրեաների կյանքում, որովհետև Հիսուս խոսում էր մի միջավայրում, ուր ապրում էին հրեաներ և նրանց կյանքից վերցված պատկերներով պետք է խոսեր նրանց հետ: Հին Կտակարանի տարբեր գրքերի էջերում տեսնում ենք, որ ջուրը ամենաարժեքավոր բանն էր անապատային երկրի բնակիչների համար: Գիտենք, որ հիմնականում անասնապահությամբ զբաղվող ժողովրդի համար, ինչպիսին հրեաներն էին, ամենաէականը խմելու ջուր հայթայթելն էր թե՛ իրենց և թե՛ իրենց հոտերի համար: Այդ իսկ պատճառով մշտապես բնակություն էին հաստատում ջրհորների շուրջ: Մեզ հայտնի են նաև Իսրայելի նախահայրերի կողմից փորված բազմաթիվ ջրհորների մասին պատմող դեպքեր: Սրանից զատ ջուրը շատ կարևոր էր լվացումների համար, հատկապես անապատային փոշու մեջ ապրող մարդկանց պարագայում: Շատ տարածված էր հատկապես ոտքերի և ձեռքերի լվացումը, որ հետագայում ստացավ նաև ծիսական իմաստ: Եվ բոլորը նախքան տաճար մտնելը պետք է պարտադիր կերպով լվացվեին բակում տեղադրված լվացարանների մեջ՝ ի նշան իրենց մեղքերի մաքրման: Ասվածի մեջ ակնհայտ են դառնում ջրի երկու կարևորագույն հատկություններ՝ կյանք՝ կենդանություն, և մաքրություն:

Այս փոքրիկ անդրադարձը մտքում ունենալով, սիրելի՛ հավատացյալներ, փորձենք քայլ առ քայլ հասկանալ Հիսուս Քրիստոսի նշված խոսքերի իմաստը: Հիսուս նախ ասում է. «Եթէ ոք ծարաւի իցէ» (Եթե մեկը ծարավ է), ուրեմն Քրիստոսին մոտենալու նախապայմանը ծարավի՝ հոգու ծարավի զգացումն է: Ինչպես սաղմոսերգուն է ասում. «Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առ Քեզ, Աստուած» (Ծարավ է իմ անձը առ Քեզ, Աստված հզոր և կենդանի, ինչպես եղջերուն ջրի ակունքներին է փափագում, այնպես էլ իմ հոգին Քեզ է փափագում, ով Աստված) (հմմտ. Սաղմ. ԽԱ 2):

«Հոգիս ծարավ է Քեզ, Աստված հզոր և կենդանի»: Ծարավի զգացում ունեցող հոգին անպայման պետք է հագեցում փնտրի, իսկ այն միայն Քրիստոս է տալիս: Այդ իսկ պատճառով էլ հոգու ծարավ ունեցող մարդկանց դեպի Իրեն է Տերը կանչում. «Եկեսցէ առ Իս եւ արբցէ». (Թող Ինձ մոտ գա և խմի): Աստծո հետ մեր առաջին հանդիպումը, սիրելինե՛ր, մկրտության ավազանն է, որի ջրով մաքրագործված ու կենաց ջուրն ըմպած՝ վերածնվում ենք հոգով, սակայն դրանով էլ չի սահմանափակվում վերածնյալ մեր հոգու կյանքը: Հիսուս շարունակում է Իր խոսքը. «Որ հաւատա Յիս՝ ով հավատում է Ինձ»: Սա նշանակում է, որ մկրտությամբ վերածնվածներս պետք է ապրենք մեր նոր կյանքը՝ հավատքի կյանքը: Այսինքն չսահմանափակվենք միայն մեր անձնական նեղ հարաբերությամբ Աստծո հետ, այլ Աստծուց մեզ տրվածը բաժանել մեր նմանի հետ՝ դրանով իսկ Ս. Հոգու գործակիցը դառնալով: Հենց դա նկատի ունի Տերը, երբ ասում է. «Գետք յորովայնէ նորա բխեսցեն ջրոց կենդանութեան» (Նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն):

Այս ամենը հստակ կերպով մեզ ցույց է տալիս, որ մեր հոգիները ծարավի են Աստծուն և որ մեկ անգամ կենաց ջուրն ըմպած մարդն այլևս ինքն է դառնում այդ ջրի մատռվակը: Սակայն նայում ենք մեր կյանքին, տեսնում ենք, որ ամեն ինչ այդպես գեղեցիկ ու կատարյալ չէ: Մեզանից շատերը թեև մկրտությամբ ըմպել են կենդանի ջրի աղբյուրից ու վերածնվել, սակայն անտարբերությամբ կամ էլ հավատի տկարության պատճառով թողել են, որ ջուրը մեր հոգիներում լճանա: Շատերիս հոգում էլ գուցե ճահիճ է արդեն, որովհետև Աստված ինքն է դադարել այն ոռոգելուց, իսկ գո՞ւցե այստեղ կան նաև մարդիկ, որոնց հոգին երբեք էլ ջուր չի տեսել: Եթե նայելով այսօր զգանք, որ այս խոսքերն ինչ-որ չափով մեզ համար են ասված, սրտի ցավով ու ափսոսանքով պիտի ընդունենք, որ մինչև հիմա ցամաք կյանքով ենք ապրել: Չէ՞ որ հոգին կենդանի է միայն այն ժամանակ, երբ մշտապես հաղորդության մեջ է Աստծո հետ, այսինքն, երբ սնվում է կենդանի ջրի ակունքից, որ է՝ Քրիստոս Ինքը: Եվ թույլ է տալիս նաև, որ Իր հոգին այդ ջրի համար առու ու գետ դառնա: Սա նշանակում է՝ ներծծվել ու հագենալ այդ ջրով և այն փոխանցել նաև մյուսներին: Այդ դեպքում միայն մեր հոգին կվերածվի ծաղկյալ դրախտի՝ նման ջրառատ այն առվակին, որի ափերը մշտապես կանաչությամբ ու ծաղկունքով են պատված:

Սիրելինե՛ր, այս խորհրդածությամբ եկեք խոնարհ հայացքով նայենք մեր հոգիների խորքը. արդյոք այնտեղ հոսո՞ւմ է կենաց ջուրը: Եթե ոչ, ապա չհապաղենք, քանզի մեզ համար է հնչում Տիրոջ քաղցր ձայնը. «Որ ծարաւի իցէ, եկեսցէ եւ որ ոք կամի առնուլ զջուրն կենաց ձրի». «Ով ծարավ է թող գա, նաև ով ուզում է առնել կենաց ջուրը ձրի»:

Շնորհք, սէր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ մեզ եւ ընդ ամենասեանս. Ամէն: